

«ԵՍԼԳԻՆԵՆ ԼԵԶԻԻ ԲԱՆԱԼԻՆ»

Այս վերնագրով եւ Արզար Պայազատի (ուստացի) հեղինակութեամբ մի նոր գիրք է լոյս տեսել Երեսնում: Գործին կցւած է յայտնի լեզուաբան Հ. Անտանանի յառաջաբանը, որ կատարելապէս համարիտ է աշխատութեան հիմնական մտքին՝ թէ խաղաղեան լեզուի բանալին պէտք է համարել արդի ուսման լեզուն: Ուսիները, յայտնի է, ընդամենը մի քանի հազար հոգուց բաղկացած փոքրիկ ժողովուրդ են ներկայիս եւ ապրում են Նիժ, Վարդաշէն ու հարեան գիւղերում (Նուխայ գաւառ, Ադրբեջան): Կրօնով հայադասան են եւ համարում են հին աղանների սե-

րունդ: Արզար Պայազատ առաջ է բերում իր գրքի մէջ մի շարք բառեր, որոնք, իր ասելով, նոյնանում են խաղաղեանի նոյնահունչ բառերի հետ նաեւ իմաստի կողմից: Քերականական ձեւերի մէջ եւս նմանութիւն ու նոյնութիւն է գտնում հեղինակը: Այս հիմնական մտքին Անտանան անվերապահօրէն տալիս է իր համաձայնութիւնը: Ընդհակառակը, Երեսնանի մասնագետները, ըստ երեւոյթին, խիստ թերահաւատ են: Յամենայն դէպս, հետաքրքրական է արծարծւած տեսութիւնը: Մասնագէտներին է մնում միայն որոշել. թէ ո՞րչափ հիմնաւոր է այն:

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Նահատակ Գրագէտներու բարեկամները լոյս են ընծայել իրենց մատենաշարի 10-րդ գիրքը՝ Արտ Յարութիւնեանի «Արձակ էջեր եւ քերթուածներ», որով խոստացած շարքը համարում է փակած:

Ն. Գ. Բարեկամների Ընկերութեան սկզբնական նպատակն էր, ինչպէս յայտնի է, լոյս ընծայել Մեծ Եղեռնին զոհ գնացած գրողների երկերը: Այս, գործի ընթացքում, այդ ծրագիրը ընդլայնեցաւ եւ մէջը առնեցին նաեւ ուրիշ մեռած գրողներ, իրքեւ այլ կարգի նահատակներ: Այսուհետեւ հասնաբար, մէջը առնին եւ կենդանի նահատակներ. արդէն ո՞ր հայ գրողը նահատակ չէ որ...

Ն. Գ. Բ. Ընկերութեան հրատարակած հատորները մտնում են հետեւեալ հեղինակներին. — Ռ. Զարդարեան, Մ. Կիրճեան, Գ. Տէր - Կարապետեան, Գ. Բարսեղեան, Ա. Արփիարեան, Գ. Զօհրապ, Տ. Զեօկիրեան, Օհան Կարօ, Ե. Օտեան, Արտ. Յարութիւնեան:

Ընկերութեան գործունէութեան մասին որոշ գաղափար տալու համար առաջ բերեմք հետեւեալ քերքը.

Մուտք. — Նւէրներ՝ 10,133 ֆր. 85 ս., Տարօնի Հայր. Միութիւնից Գ. Տէր - Կարապետեանի հատորի հրատարակութեան համար փոխան 500 գրքի՝ 10,126,80, բաժանորդներից 3,620,80. Նիւ - Եորքի մասնամիւղից՝ 25,465,85. գրքերի վաճառումից՝ 43,187,15 - ընդհանուր գումար 92,534,45 ֆր.:

Ելք. — Տարը հատորի տպագրութեան՝ 61,196 ֆր., հեղինակի իրաւունք՝ 2504,20, ընդօրինակութեան՝ 7996,70. պաշտօնեայի՝ 7075,90, առափումն եւ այլն՝ 13,547,35. — ընդհանուր գումար՝ 92,320,15 ֆր.: Առ դիկտմբերամիս սնտուկում պատրաստ՝ 214,30 ֆր.:

Այս քերքը ինքնին պերճախօս են: Ընկերութիւնը, ինչպէս տեսնում է, շահակցական ոչ մի նպատակ չունի եւ հիմնւած է բացառաբար գոհարեութեան սկզբունքի վրա: Հատորները կազմւած են Բարեկամների անձնական

աշխատանքով, միւսականն էլ հաւաք-
 ւած է նրանց ջանքերով եւ, դժբախտա-
 բար, սակաւաքիւ գրասէր բարեկամ-
 ների աջակցութեամբ: Այս վերջինների
 շարքին մասնաւորապէս պէտք է յիշել
 հանգուցեալ ԲԺ. Ճ. Երկանեանի անու-
 նը, որ քէ՛ անձնական գոհողութեամբ
 եւ քէ՛ քաջակերելով Նիւ - Եորքի բա-
 րեկամներին՝ բանգագին ծառայութիւն
 հասցրեց Ն. Գ. Բ.-ի գործին:

Հրատարակած 10 հատորից առաջին
 վեցը տպւած է 1500-ական օրինակ,
 վերջին չորսը՝ հազարական, ընդամե-
 նը, ուրեմն, 13.000 գիրք, որից, ԵՅՔԸ
 տարւայ ընթացքում, կանխիկ դրամով,
 ծախուել է 3023 օրինակ, որ այնքան էլ
 սլաոսիւ քերոզ բարեմիշ չէ «արգոյ ըն-
 քերցող հասարակութեան» համար :
 Ն. Գ. Բ.-երի այս համեստ, բայց օգ-
 տակար գործը արժանի է աւելի ջերմ
 քաջակերանքի:

Ի վերջոյ, առաջ քերեմք Ն. Գ. Բ.-ի
 հետեւեալ կոչը, որ, կարծում եմք,
 մեկնութեան կարիք չունի.

ԿՈՉ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

ԵՒ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ

1929-ի աշնան էր, որ խումբ մը մը-
 տաւորակամներ հիմը դրին Նահատակ
 Գրագէտներու Բարեկամներ հրատա-
 րակչական ընկերութեան, նպատակ ու-

նենայով հաւաքել եւ հրատարակութեան
 տալ արեւմտահայ նահատակ կամ մե-
 ոած գրագէտներուն երկերը:

Արդէն կը թեւակոխենք մեր գոյու-
 րեան ԵՅՔԸ տարին, եւ հակառակ
 տնտեսական տագնապին՝ ուրախ ենք
 յայտարարելու, որ կրցեր ենք հրատա-
 րակել արդէն ՏԱՍԸ գեղեցիկ եւ ըն-
 տրած հատորներ, իրականացնելով մեր
 մատենաշարին առաջին շարքը:

Պատրաստ դրամագլուխով մը չէր, որ
 գործի ձեռնարկեցինք: Շնորհիւ հիմնա-
 դիրներու աննահանջ եւ անձուէր գոր-
 ծունէութեան, ինչպէս նաեւ քանի մը
 նւիրատուներու եւ հաւատարիմ ընթեր-
 ցողներու համակրութեան, հրատարակ-
 չական կեանքին մէջ անհրաժեշտ ձեռ-
 նարկ մը դարձուցինք: Պէտք ունինք
 սակայն նոր օժանդակողներու եւ հա-
 մակիր ընթերցողներու, այս գեղեցիկ
 մատենաշարը շարունակելու համար:

Կը հաւատամք, որ այս կերպով մեր
 նահատակ գրագէտներուն յիշատակը
 յարգած ու յաւերժացուցած պիտի ըլ-
 լանք, իբրեւ նւիրական պարտականու-
 րիւն:

Ս. ՎՐԱՑԵԱՆ
 ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ
 ՏՈՒՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
 Շ. ՆԱՐԳՈՒՆԻ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ

«ԶԻԱՐԹՆՈՑ» տարեգիրքը

Երբեմնի «ԶԻԱՐԹՆՈՑ» գեղարուես-
 տական - գրական հանդէսը, որ երկու
 տարի լոյս տեսաւ Փարիզ՝ Հր. Բալու-
 եանի խմբագրութեամբ, կը սկսի իր
 վերհրատարակութեան՝ այս անգամ
 Տարեգիրքի ձեւով: Առաջին հատորը
 պիտի բաղկանայ 250 մեծադիր էջե-
 րից:

Հատորը պիտի ունենայ հետեւեալ
 բաժինները. - 1) Հայ գրականութիւն.
 2) Օտար գրական էջեր. 3) Գրական ու-

սումնասիրութիւններ. 4) Գեղարուեստի
 փիլիսոփայութիւն. 5) Ճարտարապետ -
 տութիւն. 6) Նկարչութիւն, քանդակ -
 փորագրութիւն. 7) Պար. 8) Թատրոն.
 9) Երաժշտութիւն: Բաժիններին կը յա-
 ջորդէ քրոնիկի մասը, ուր մանրամասն
 կերպով կը ներկայացուին. Ա) Արեստի
 նշարներ, Բ) Զրոյց - հանդիպումներ,
 Գ) Հայաստանի մշակութային տարին,
 Դ) Արտասահմանեան մշակութային
 շարժումը, Ե) Գրախօսականներ՝ Հա-